ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

22 հունիս 2023թ.Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2023թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)

2. 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում: (Զեկուցող՝ Հ. Ասատրյան)

3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2023 թ. հարցման արդյունքների մասին: (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)

4. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննրջանի արդյունքների ամփոփում: (Զեկուցող՝ Վ. Աղաբաբյան)

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Ա. Աղաբաբյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ հերթական նիստում նախատեսված է 4 զեկուցվող հարց՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների պաշտպանությա արդյունքները: Նա նշեց, որ ավարտական աշխատանքների

պաշտպանությունը տեղի է ունեցել 21.05.23թ., մասնակցել են «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 8 և «Դիզայն» կրթական ծրագրի 9 ուսանող: «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի բոլոր ուսանողները ստացել են գերազանց գնահատականներ, իսկ «Դիզայն» կրթական ծրագրի 2 ուսանող՝ գերազանց և 7 ուսանող՝ լավ: Արդյունքները ընդհանուր առմամբ գոհացնող են:

Զեկուցողը նաև նշեց, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահն էր Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի «Դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի» ֆակուլտետի «Համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման» ամբիոնի պրոֆեսոր Նունե Յուրիի Աղբալյան: Վերջինիս կարծիքով ավարտական աշխատանքներում պակասում է արդիական նյութերի և տեխնոլոգիաների ուսումնասիրությունը: Նախագահը կարծիք է հայտնել, որ նյութաբանություն առարկան կարելի է դասավանդել բոլոր կրթական ծրագրերի համար: Կարելի է շեշտը դնել նաև զարդերի և ժամանակակից լրացումների վրա: Վերլուծությունները պետք է ավելի հիմնավորված լինեն և արտացոլեն հեղինակի սեփական կարծիքը այս կամ այն հարցի շուրջ: Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր ավարտական աշխատանքի վերաբերյալ հնչեցված կարծիք քննարկվել է ուսանողի և ղեկավարի հետ, հաշվի են առնվել գրախոսների դիտողությունները և հետագայում, թեմայի շարունակության դեպքում, հաշվի կառնվեն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ան. Չիբուխչյանը, Հ. Ասատրյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ «Գունանկարի, գծանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը: Զեկուցողը ներկայացրեց 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները և նշեցին, որ հետազոտական աշխատանքն ուսանողների համար եղել է մասնագիտական և ուսուցողական հիանալի փորձ: Հետազոտական աշխատանքների ղեկավարները նշեցին, որ ուսանողների հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ, որի ընթացքում շտկվել են բացթողումները և թերացումները: Ոսանողների դրական արձագանքները թույլ են տալիս հետազոտական աշխատանքների դերը համարել հաջողված:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Վ. Աղաբաբյանը. Մ. Ստեփանյանը: Դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը ևս կարևորեց հետազոտական աշխատանքների դերը: Նա ղեկավարների ուշադրությունը սևեռեց ուսանողների աշխատանքների հետազոտական և վերլուծական հատվածին: Ըստ նրա, ուսանողները հաճախ զգալի կերպով օգտվում են վերլուծական և էլեկտրոնային գրականությունից՝ հաճախ հղումներ չտալով: Այստեղ կարևոր անելիք ունեն հետազոտական աշխատանքի ղեկավարները: Վ. Աղաբաբյանը նաև կարևորեց թեմաների ընտրության կարևորությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ դեկանի պաշտոնակատար Վ.Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ հարցման շրջանակներում մասնաճյուղը փորձել է պարզել, թե մեր շրջանավարտների մոտ որքան է բարձր ինքնադրսևորվելու

կարողությունները, մասնավորապես որքան է նրանց մոտ զարգացած հաղորդակցվելու, կազմակերպչական, քննադատական, վերլուծական և տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները: Գնահատականները բավականին գոհացնող են, սակայն կարելի է ավելի մեծ ուշադրություն դարձնել ուսումնառության կազմակերպման ձևերին ու մեթոդներին, որպեսզի նպաստենք մեր ուսանողների մոտ քննադատական-վերլուծական կարողությունների զարգացմանը: Այստեղ հավելենք, որ մեր 2023 թ.-ի և հաջորդ տարիների շրջանավարտների մոտ ակնկալում ենք, որ գործնական միջավայրում տեսանելի կարտահայտվեն նրանց ձեռք բերած վերլուծական և հետազոտական կարողությունները, ինչը պայմանավորված կլինի կրթական գործընթացում ներդրված նոր մոտեցմամբ՝ հետազոտական աշխատանքների իրականացմամբ:

Կից տեղադրվում է հարցման արդյունքների վերլուծությունների հղումները՝
http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/10/Ardjunq_Shrg_bav-23.pdf
http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/10/Ardjunq_Shrg_bav_MKC-23.pdf

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, Տ. Բագամյանը, Ան. Չիբուխչյանը, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ..

ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2023թ. հարցման արդյունքները ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ դեկանի պաշտոնակատար Վ.Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա II կիսամյակի քննաշրջանի ամփոփումը: Զեկուցողը նշեց, որ քննաշրջանը իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն՝ մայիսի 30-ից հունիսի 3-ը: Ս.թ. հունիսի 6-

24-ն ընկած ժամանակահատվածում իրականացվելու է նաև քննաշրջանը: Ֆակուլտետի բոլոր՝ 67 ուսանողները մասնակցել են քննություններին և ստուգարքներին: 11 ուսանողներ ստացել են անբավարար գնահատականներ:

Զեկուցողը նշեց, որ I լուծարքային շրջանը տևելու է հունիսի 29-ից մինչև հուլիսի 6-ը: Ժամանակացույցներն ուղարկվել են ամբիոններ և տեղադրվել են ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքում: Ժամանակացույցներում արտահայտված է նաև լուծարք ունեցող ուսանողների թիվը (11 ուսանող):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ք. Մխիթարյանը, Ա. Չիբուխչյանը, Դ. Չիբուխչյանը, Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի II ընթացիկ ստուգումների ու քննությունների և քննաշրջանի (առանց լուծարքային շրջանների) արդյունքները համարել բավարար և տվյալ հարցի վերաբերյալ Վ. Աղաբաբյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ԱՂԱԲԱԲՅԱՆ**

ՔՐՏՈՒՂԱՐ՝ **Ք. ՄԽԻԹԱՐՅԱՆ**